Հ Ր Ա Վ Ե Ր

<<Ապարանի թիվ-1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-Ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի՝

Նախքան մրցույթի հայտ ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող մրցույթի հայտերը ենթակա են մերժման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Ք. ԱՊԱՐԱՆ ԹԻՎ-1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Ք. ԱՊԱՐԱՆ, ԳԱՅԻ- 5, թիվ-1 մանկապարտեզ

Pavlik.migayelyan@mail.ru

----------N----------

Ապարանի թիվ-1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել <<ԱՄ-ԱՔ-ՄՊ1-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով մրցույթի շրջանակներում սննդամթերք

Մատակարարման պայմաններն են՝ սննդամթերքի տրամադրում տեխնիկական բնութագրերով նախատեսված ժամկետներում: Վաճառողը ապրանքը հասցնում է պատվիրատուին:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան- 26 հասցեով՝ Ապարանի քաղաքապետարան, ֆինանսական բաժնի պետ, գնումների համակարգման պատասխանատու Վահան Միքայելյանին մինչև 2015 թ. փետրվարի 18-ը, ժամը 11.^{00}-ն:

Գնային առաջարկներ պարունակող ծրարները կբացվեն Ապարանի քաղաքապետարանի շենքում, 2015 թ. փետրվարի 18-ին, ժամը 11.^{00}-ին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով և մասնակցի հայտարարությունը մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան ապրանքի մատակարարման մասին: Գնային առաջարկը ներկայացվում է փակ՝ սոսնձված ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

ա/<<Գնային առաջարկ>> բառերը.

բ/ընթացակարգի ծածկագիրը

գ/<<Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը>> բառերը.

դ/մասնակցի անվանումը /անունը/, գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

ե/պատվիրատուի անվանումը /անունը/, գտնվելու վայրը:

Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ օրինակ պատճենից, ընդ որում բնօրինակ փաթեթում ներառված պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը պետք է կնքված և ստորագրված լինեն մասնակցի կողմից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են Բնօրինակ և Պատճե բառերը:

Էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատումը պարտադիր է:

Փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը փաստաթղթերը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ փաստաթղթերը ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված/ տարբերակով:

Մեր էլեկտրոնային հասցեն՝ Pavlik.migayelyan@mail.ru

Մանկապարտեզի տնօրեն՝ Գ. Ալեքսանյան

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (նախագիծ)

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ
Պայմանագիր

<<ԱՄ-ԱՔ-ՄՊ1-**ՇՀԱՊՁԲ**-11/2>>

Քաղաք Ապարան «-----» ---------- 2------թ.

Քաղաք Ապարանի թիվ-1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը , ի դեմս - Տնօրեն՝Գ. Ալեքսանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և ----------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Գնման ժամանակացույց-Տեխնիկական բնութագրով նախատեսված ---------- (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Գնման ժամանակացույց-Տեխնիկական բնութագրով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ջնջել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ ---------- (----------) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ. ----
---

---------- կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ----- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած ----- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ
ՀՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ Ք. ԱՊԱՐԱՆ ԹԻՎ- ***1 1*** ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ	----------
Ք. Ապարան, ԳԱՅԻ-5	----------
ՀՎՀՀ 05205558	----------
Հ/Հ 2475103478310000	(ստորագրություն)
Արդշինինվեստ բանկ Ապարան մ/ճ	Կ.Տ
Տնօրեն՝ Գ. Ալեքսանյան	

/ստորագրություն/	
Կ.Տ	

Հաստատում եմ՝

<<Ապարանի թիվ 1 մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի

տնօրեն՝ _____ Գ. Ալեքսանյան

Գ Ն ՈՒ Մ Ն Ե Ր Ի ՑՈՒՑԱԿ

<<ԱՊԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ 2015Թ.

Գնման առարկան	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր գումարը հզ.(դրամ)	Գնման ձև (ընթացակարգ)
1	2	3	4	5
Հաց, բարձր տեսակի	կգ	1500		ՇՀ
Կարագ սերուցքային	կգ	80		ՇՀ
Պանիր տեղական արտադրության/լոռի/	կգ	25		ՇՀ
Կաթ կովի /պաստերիզացված/	լիտր	1000		ՇՀ
Թթվասեր /180գր./	կգ	45		ՇՀ
Միրգ թարմ	կգ	100		ՇՀ
Շաքարավազ	կգ	255		ՇՀ
Քաղցրաբլիթ /պերյանիկ/	կգ	80		ՇՀ
Կակաո /փոշի/	կգ	2		ՇՀ
Մակարոն	կգ	200		ՇՀ
Բրինձ	կգ	175		ՇՀ
Հնդկաձավար /գրեչկա/	կգ	80		ՇՀ
Ձավար	կգ	50		ՇՀ
Ոսպ	կգ	75		ՇՀ
Միս հավի կրծքամիս-տեղական	կգ	100		ՇՀ
Միս տավարի ֆիլե-տեղական	կգ	110		ՇՀ
Այլուր ցորենի	կգ	50		ՇՀ
Բուսական յուղ-ձեթ	լիտր	70		ՇՀ

Տոմատի մածուկ	կգ	50		ՇՀ
Թեյ /չոր/	կգ	3		ՇՀ
Ձու	հատ	1200		ՇՀ
Գարուխ/ոլոռ/	կգ	60		ՇՀ
Կարամել	կգ	50		ՇՀ
Աղ յոդացված	կգ	65		ՇՀ
Ջեմ	կգ	30		ՇՀ
Թխվածքաբլիթ	կգ	85		ՇՀ
Սպիտակաձավար /մանի/	կգ	45		ՇՀ
Կարտոֆիլ	կգ	500		ՇՀ
Կանաչի /խառը/	կապ	65		ՇՀ
Սոխ /գլուխ/	կգ	60		ՇՀ
Բազուկ	կգ	35		ՇՀ
Գազար	կգ	35		ՇՀ
Կաղամբ	կգ	380		ՇՀ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ք.Ապարան թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2015թ. կարիքների համար սննդի ձեռք բերման

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ձեռք բերվող ապրանքների տեխնիկական բնութագրերը	Չ/Մ	Մատակարարման ռեժիմ
1	Միրգ	Խառը, թարմ վիճակում	Կգ	Ըստ պայմանավորվածության
2	Ալյուր բարձր որակի	Բարձր տեսակի, փայլուն սպիտակ գույնի, առանց ավելորդ խառնուրդների և հոտի, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
3	Մակարոն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, չափածրարված: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
4	Շաքարավազ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված): ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
5	Ձեթ արևածաղկի	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված , փաթեթավորումը՝ շշալցված մինչև 3լիտր տարողություններում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	լիտր	ամսեկան
6	Բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
7	Հնդկաձավար (գրեչկա)	Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 % ոչ պակաս, գործարանային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
8	Ոսպ	Մաքուր, չոր՝ խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14,0-17,0 % ոչ ավելի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
9	Ոլոռ	Չորացրած, կեղևած, դեղին գույնի: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
10	Ձավար	Պատրաստված ցորենի ծեծած տեսակից, սպիտակ և թեփահան եղած: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
11	Սպիտակաձավար	Պատրաստված ցորենից: Գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
12	Տոմատի մածուկ	Բարձր տեսակի ապակե տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ապակե տարաներով: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
13	Ձու	1-ին կարգի, Ձու սեղանի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, սեղանի ձվի պահման ժամկետը 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	հատ	շաբաթական
14	Միս (տավարի) փափուկ	Միս տավարի թարմ, առանց ոսկորի մսեղիք, զարգացած մկաններով, պահված 6 ժ-ից ոչ ավելի: Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-40C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
15	Հավի միս կրծքամիս	Հավի կրծքամիս տեղական արտադրության, թարմ վիճակում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
16	Քաղցրաբլիթ /պերյանիկ/	Թարմ, փաթեթավորված, ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
17	Թխվածքաբլիթ	Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20%-ից մինչև 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
18	կակաո	Չոր վիճակում, տուփերով փաթեթավորված, ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
19	Կոնֆետ-Կարամել	Թարմ, մրգային, տեղական արտադրության 2 տեսակի՝ նաբաթով և միջուկով, խոնավությունը՝ 3.0% ից ոչ ավելի, թթվայնությունը՝ -3-26: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական

20	Թթվասեր	Թարմ կովի կաթից,յողայնությունը20%-ԻՑ ոչ պակաս,թթվայնությունը65-100Т: Գործարանային արտադրությամբ և փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
21	Ձեմ	Տարբեր մրգերից և հատապտուղներից, պաստերացված, բարձր տեսակների, ապակե տարաներով, գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
22	Թեյ	Բայխաթեյ սև, տերևներով, գործարանային փաթեթավորմամբ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
23	Աղ, կերակրի մանր	Էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50°10 մգ/կգ: Փաթեթավորումը՝ գործարանային: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	ամսեկան
24	Կաթ	Պաստերացված կովի կաթ 3.2 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-21 Т, չափածրարվածպլաստմասսե 1 լ. տարաներում: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	լիտր	ամենօրյա
25	Պանիր	Պանիր կովի կաթից, յուղի զանգվածային մասը 50 %-ից ոչ պակաս, աղի զանգվածային մասը 3,5-4,5 %: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
26	Կաղամբ	Գլուխ կաղամբ, առանց արտաքին վնասվածքների, չցրտահարված, սովորական տեսակների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
27	Կարտոֆիլ	I տեսակի, չցրտահարված, առանց արտաքին վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ կտորի, ցացնի և պոլիմերային պարկերով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
28	Կանաչի	Թարմ կանաչի, տարբեր տեսակի, տեղական արտադրության: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կապ	շաբաթական
29	Գազար	Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջին երկարությունը 10-15 սմ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
30	Բազուկ	Սովորական տեսակի, առանց արտաքին վնասվածքների, վաղահաս, միջին երկարությունը 5-7 սմ, լայնքը՝ 10-12 սմ: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
31	Սոխ	Ընտիր տեսակի, թարմ, կիսակծու, նեղ մասի տրամագիծը 3սմ-ից ոչ պակաս: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական
32	Հաց, բարձր տեսակի(280 գր)	Թարմ, (280գր) Ցորենի ալյուրից թողարկված հատով, պատրաստված բարձր տեսակի ալյուրից: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	Ամենօրյա
33	Կարագ	Սերուցքային, 71.5-82.5% յուղայնությամբ, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գր, ածխաջուր 0,7գր, 740 կկալ, 20-25 կգ գործարանային փաթեթներով: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան:	կգ	շաբաթական

Ապարանի թիվ-1 մանկապարտեզի

Տնօրեն՝ Գ. Ալեքսանյան

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

----------ի կողմից N ԱՄ-ԱՔ-ՄՊ1-ՇՀԱՊՁԲ-11/2ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի ---------- չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

----------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

,--------- ---------- 2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ԱՄ-ԱՔ-ՄՊ1-ՇՀԱՊՁԲ-11/2ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ----------ն առաջարկում է

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Չափաբաժին-ների համարները	Գնման առարկայի անվանումը	Ինքնարժեքի հաշվարկ		Առաջարկված գինը /տառերով և թվերով/
		Ինքնարժեք	ԱԱՀ-ն*	
1	2	3	4	5
1	,Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1ե			
2	,Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2ե			
…	…			
…	…			

*Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

---------- ----------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

,--------- ---------- 2015թ.

(ամսաթիվը, ամիսը)

Գնման ժամանակացույց
Ք. Ապարան թիվ 1 մանկապարտեզ

/դրամ/

N	Ապրանքի անվանումը	Ապրանքի տրամադրումը՝ 2015 թ, ընթացքում ըստ եռամսյակների									Ընդամենը	
		Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
			քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	Շաքարավազ		25	-	75		80		75		255	
2	Կարագ		8		24		24		24		80	
3	Թխվածքաբլիթ		9	-	26		26		24		85	
4	Կարամել		5	-	15		15		15		50	
5	Չեթ		7	-	21		21		21		70	
6	Տոմատի մածուկ		5	-	15		15		15		50	
7	Աղ կերակրի		7	-	20		20		18		65	
8	Պանիր		3		7		8		7		25	
9	Թեյ		0.3	-	0.9		0,9		0,9		3	
10	Մակարոն		20	-	60		60		60		200	
11	Բրինձ		18	-	52		53		52		175	
12	Ոսպ		7	-	23		23		22		75	
13	Ոլոռ		6	-	18		18		18		60	
14	Հնդկաձավար		8	-	24		24		24		80	
15	Ջեմ		3	-	9		9		9		30	
16	Քաղցրաբլիթ /պերյանիկ/		8	-	24		24		24		80	
17	Թթվասեր		5	-	13		14		13		45	
18	Մանի		5	-	13		14		13		45	
19	Ձավար		5	-	15		15		15		50	
20	Ալյուր		5	-	15		15		15		50	
21	Հավկիթ /ձու/		120	-	360		360		360		1200	
22	Միրգ		10	-	30		30		30		100	
23	Տավարի միս		11	-	33		33		33		110	
24	Հավի միս		10	-	30		30		30		100	
25	Կաթ կովի		100	-	300		300		300		1000	
26	Կարտոֆիլ		50	-	150		150		150		500	
27	Կաղամբ		38	-	114		114		114		380	
28	Գազար		3	-	10		12		10		35	
29	Սոխ		6	-	18		18		18		60	
30	Կանաչի		7	-	20		20		18		65	
31	Բազուկ		3	-	10		12		10		35	
32	Հաց ցորենի		150	-	450		450		450		1500	
33	Կակաո /փոշի/		0.2	-	0.6		0.6		0.6		2	

Ապարանի թիվ-1 մանկապարտեզ ի

Տնօրեն՝ Գ. Ալեքսանյան

Հավելված 2

«ԱՄ-ԱՔ-ՄՊ1-ՇՀԱՊՁԲ - 11 / 2» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N ը/կ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԵՎ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Նախատեսվում է ֆինանսավորվել 2015թ.-ին Ապարան քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի միջոցների հաշվին (աճողական կարգով), ընդ որում												Ընդամենը
		3 ամիս			6 ամիս			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
	Ապարան քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռք բերում			10%	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարան քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՎԱՃԱՌՈՂ

ք.Ապարան Բաղրամյան-26

Ապարանի ՏԳԲ

Հ/Հ 2475103478310000

ՀՎՀՀ 05205558

Տնօրեն՝ Գ.Ալեքսանյան

Կ.Տ

Կ.Տ